Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող և Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման բաց մրցույթ:

Լոտ 1 - Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող, 06-061-0208-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,32 հա մակերեսով 2-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մեկնարկային տարեկան վարձավճարը՝ 25000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0248-0006 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,2571 հա մակերեսով 1-ին կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մեկնարկային տարեկան վարձավճարը՝ 64000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0246-0036 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,02 հա մակերեսով 2-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մեկնարկային տարեկան վարձավճարը՝ 1150 ՀՀ դրամ:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի անցկացման օրը վճարում են նախավճար՝ հողամասի մեկնարկային տարեկան վարձավճարի 5%-ի չափով: Վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:

Մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 206 սենյակ): Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2026թ. սեպտեմբերի 7-ը: Մրցույթը կայանալու է 2026թ. սեպտեմբերի 11–ին ժամը 12.00-ին:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ